

րէն միոյն օգնութիւնը չըլլար՝ քիչ մնաց հոն պիտի պարտուէր : Քաղաքը այն ատեն յարձակումով գրաւուեցաւ և աւարի արբուեցաւ : Ի յրումն դժբախտութեանց, Ռեմլէն 1177ին հրդեհի մը պատճառաւ աւերակ դարձաւ(\*) : 1187ին Սալահէտտին գրաւեց զայն : 1204ին ան քրիստոնէից ձեռքը անցաւ և անոնք հոն իշխեցին կէս դարու չափ : 1214ին Ռաուլ եպս.ը գերի ինկաւ : 1266ին Պիպարսը գրաւեց թէ Ռեմլէն և թէ Լիւզը :

Լիւզի մայր եկեղեցին աւերեցաւ, իսկ Ռեմլէինը՝ մզկիթի վերածեցին : Հիւսիսային դրան վրայ զետեղուած արաբերէն արձանագրութիւն մը կ'ըսէ թէ ան շինուած է Փրկչական 1298ին : Այս բացատրութիւնը չափազանցուած է : Կատարուածը վերաշինութիւն չէր, այլ նորոգութիւն և իսլամական պաշտամունքի յարմարումն : Շէնքին այս բաժանումէն ծանր փոփոխութիւններ յառաջ եկան, բայց ոչ արմատական :

1613ին Levallant, Փիլիպպոս Գեղեցիկէն (1285-1314) շինուած փոքր հիւրանոցը յիշելէ յետոյ, Le Pèlerin Véritable ի մէջ կը նըկարագրէ «երկու գեղեցիկ եկեղեցիների խիստ ամբողջական, բայց մզկիթի վերածուած են, մին դուրսը, միւսը քաղաքին մէջ. մին նուիրուած էր Ս. Յովհաննէս Մկրտչի, միւսը՝ Քառասուն Վկաներու, որոնց մասունքը Հայաստանի Սեբաստիայէն փոխադրուելով՝ ծանօթ է թէ ստուգիւ զետեղուած են այս եկեղեցիին սեղանին ներքեւ» :

Քառասուն Վկաներու մզկիթը աւերակ է : Գալով Ս. Յովհաննու հին մայր եկեղեցիին՝ իր մուտքը երկար ատեն արգիլուած էր քրիստոնէից և տակաւին դժուար է ներս մտնելը : Ասպետ Arvieux մեզ կը պատմէ թէ 1659ին դրան սեմէն կրցաւ ներսը նայուածք մը նետել և հոն տեսաւ «չորս կարգ սիւններ, իւրաքանչիւրը տասներկու սիւն, որ կը բռնեն կամարները» : Ան կ'աւելցնէ «այսքան կորոզացայ տեսնել, ո՛րք այլ շատ նեղութեամբ» :

(\*) 1047ին (Հիճ. 425) Եգիպտոսի և Սիրիոյ մէջ սոսկալի երկրաշարժներ պատահելով բազմաթիւ տուններ քանդուեցան և շատ մարդիկ մեռան փրատակներու տակ : Ռեմլէի մէկ երեքը փնացաւ. տեղոյն մզկիթը շարք ու փետր եղաւ : Երուսաղէմի պարիսպներուն մէկ մասը կործանեցաւ : Դաւթի բերդէն ինկաւ խոշոր կտոր մը. Էլ-Խալիլի մզկիթը ծանրապէս վնասուեցաւ (Տե՛ս Միւնճիր-էտ-տին, Թարգմ. Sauvairé ի, հրատ. 1876, էջ 69) :